№ 48 ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 18 — 1905 — ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 18 № 48

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դարձեալ մի քանի խօսք. Հեռագիրներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընթերցողի օրագիրը. Քաղաքային Միլիցիա. Նամակ Ալէքսանդրապոլից. Նամակներ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Նամակ Պարսկաստանից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ԴԱՐՁԵԱԼ ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Գրաքննութեան կամ ցենզուրայի վերացման մասին խօսելիս շատ անգամ լսում էք մի առարկութիւն, թէ արդեօք կովկասեան տեղական մամուլը չի թոյլատրի չափազանց ծայրահեղութիւններ և նա չի անցնի այն սահմանները, որոնք դարձնում են տպագրական խօսքը վտանգաւոր կամ վնասակար հասարակութեան համար։

Մենք բոլորովին չունենք այդպիսի երկիւղներ։ Եւ չունենք ոչ թէ այն պատճառով, որ կարծում ենք, թէ չեն լինի ծայրահեղութեան և չափազանցութեան երևոյթներ։ Ոչ, դրանք կարող են տեղի ունենալ։ Բայց մեր կեանքի մէջ շատ կան միմեանց լրացնող, միմեանց հաւասարակշռող ազդեցութիւններ և մեր մէջ հասարակական կարծիքը սկսում է կամաց կամաց դրական դեր կատարել կեանքի մէջ։

Թէ հայերը և թէ վրացիները շատ հարցերի վերաբերութեամբ ունեն զանազան տեսակէտներով ղեկավարվող անձնաւորութիւններ։ Եթէ մէկը ծայրահեղ հնասէր է և կը ցանկանար միայն հին աւանդութիւններով առաջնորդվել կեանքի մէջ, դրա հակառակ կան և ուրիշները, որոնք հաւատում են նոր հոսանքների փրկարար ազդեցութեանը։ Եւ չէ կարելի ասել, թէ եթէ կեանքը թողված լինէր ինքը իր ընթացքին, և մամուլը վայելում լինէր կատարեալ ազատութիւն, որքան յաճախ և մեծ կը լինէին չափազանցութեան դէպքերը։

Օրինակ մեր հայկական կեանքի մէջ մենք չափազանց շատ կամ քիչ ենք խօսում մի շարք հարցերի մասին ոչ այն պատճառով, որ ցենզուրան թոյլ է տալիս թէ ոչ, այլ այն պատճառով, որ խմբագրութիւնները իրանք հասարակութեան հետ միասին նպատակայարմար են դատում ընդունել այս կամ այն դիրքը։ Մեր ինտելիգենտ դասակարգի ժողովածներից մէկում, որտեղ խօսակցութեան առարկայ էին լեհական, ֆինլանդական, լատիշական ծրագիրները, հայերը իրանք զգուշանում էին Կովկասի հայկական նահանգների մասին հերթական հարց ասպարէզ մղելուց և դա ոչ այն պատճառով, որ երկիւղ կար կառավարչական շրջաններից, այլ այն, որ խնդիրը հասարվում էր ոչ նպատակայարմար, ոչ գործնական, ոչ ժամանակակից, ոչ հասունացած։ Այդտեղ ցենզուրան չէ խոչընդոտ հանդիսացողը, այլ ինքը, կեանքի լոգիկան։

Այդ և ուրիշ նոյնանման օրինակներով մեզ համար դժուար չէր լինել ապացուցանել, որ չը պէտք է վախենալ մամուլի ազատութիւնից և գրաքննութեան վերացումից և աւելի վստահութիւն ցոյց տալ դէպի մեր երկրի ինտելիգենցիան և հասարակական առողջ կարծիքը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը հետևեալ հեռագիրն է ուղարկել Թէհրան պարսից Մուզաֆֆէր-էդդին Շահին.

«Նորին Կայսերական Մեծութիւն Իրանի Շահնշահին. ինձ հեռագրում են Թիֆլիսից, որ Մէշէդում տեղի է ունեցել կոտորած, աւարառութիւն հայերի և քրիստոնեաների մէջ։ Ապահով եմ, որ կարգը կը վերականգնվի անմիջապէս և Ձեր հայ հաւատարիմ հպատակները կը վայելեն ինչպէս մեզ—Ձեր Կայսերական Մեծութեան հայրական բարձր հովանաւորութիւնը։ Եւ ես իմ զառամեալ օրերում աղօթում եմ Աստուծուն Իրանի մեծ Վեհապետի առողջութեան և երկար կեանքի համար։

Մկրտիչ Կաթողիկոս Ամենայն Հայոց»։

Մուզաֆֆէր-էդդին Շահի պատասխանը. էջմիածին. Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսին.

«Մեր բարձր հովանաւորութիւնը չէ դադարել գործադրվելուց Մեր Կայսրութեան մէջ ապրող հայերի և քրիստոնեաների վերաբերմամբ. նրանք այնտեղ վայելում են և կը վայելեն կատարեալ ապահովութիւն։ Ես հաւատացած եմ, որ Ձեր Սրբութիւնը կը շարունակէ բաշխել նրանց ձեր իմաստուն խորհուրդները։

Մուզաֆֆեր-էդդին»

12/III 1905 թ. Թէհրան.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

III

Քաղաքացիական կեանքի զարգացումը Կովկասում, ինչպէս յայտնի է, իսկապէս սկսվեց Կովկասեան առաջին փոխարքայ իշխան Վորոնցովի ժամանակից։ «Новости»-ն պատմում է, թէ ինչ սիստեմի էր հետևում Վորոնցովը։

Կրթված լինելով անգլիական արիստոկրատիզմի սկզբունքների վրա, իշխան Վորոնցովը կարծեց, թէ Կովկասը Ռուսաստանին ամենահեշտ կերպով կարելի է մօտեցնել տեղային արիստոկրատիայի միջոցով, որը պէտք է ուժեղացնել, կազմակերպել։ Արիստոկրատիական դասակարգ ունէին միայն վրացիները։ Եւ նրանց ազնուականութիւնը առաջ քաշվեց, նրանց հանդիսաւոր դիրքի հասաւ։ Բայց հետևանքը—Այն միայն, որ վրացի ազնուականները զինուորական ծառայութեան մէջ մտան, սկսեցին առաջադիմել այդ ասպարէզում։

Դա, ի հարկէ, շատ չնչին ազդեցութիւն պիտի անէր ժողովրդական կեանքի վրա։

Վորոնցովի սիստեմին հետևեց և երկրորդ փոխարքան, իշխան Բարեատինսկի։ Սա էլ իր ուշադրութիւնը դարձրեց գլխաւորապէս Թուրք կալուածատիրական դասակարգի վրա։ Բէկերը պիտի կազմէին մահմեդական արիստոկրատիան։ Բարեատինսկին մի և նոյն ժամանակ աւելի զարգացրեց բիւրոկրատիան Անդրկովկասում, ջանքեր գործ դրեց, որ ռուսական օրթոդոքսութիւնը տարածվի տեղական ազգաբնակութեան մէջ։

Կովկասեան ցեղերի մէջ հայերը շատ կարևոր տեղ են բռնում. նրանք և վրացիներն են տեղական քրիստոնեայ ժողովուրդները։

Բայց հայերը չունեն ազնուական դասակարգ և նրանց վրա ուշադրութիւն չը դարձրին Կովկասի առաջին երկու փոխարքաները։

Մենք կարող ենք ասել ռուս լրագրին, որ չը նայած այս հանգամանքին, հայերը այժմ էլ ամենագեղեցիկ յիշատակներ են պահպանել փոխարքայութեան ժամանակների մասին։ Եւ դրա պատճառը շատ հասկանալի է։

Եթէ հայ ժողովուրդը առանձին ուշադրութիւն և խնամք չէր վայելում, գոնէ խորթ զաւակների դրութեան մէջ էլ չէր։ Իր քաղաքակրթական ձգտումների մէջ նա այնքան անյաղթելի արգելքների չէր հանդիպում։ Երկրի բարձր իշխանութեան կողմից նա շատ յաճախ խրախոյս, աջակցութիւն էր գտնում իր կրթական-առաջադիմական տենչերը իրագործելու համար։

Ամենագլխաւորը այն էր, որ իշխանութիւնը վերաբերվում էր տեղական ազգաբնակութեան հաւատով, վստահութեամբ։ Հաւատարիմ հրպատակութեան դէմ ոչինչ յանցանք չը գործող ազգութիւնները թշնամի չէին նկատվում, նրանց չէին ճնշում, բոլոր միջոցներով, իշխանութիւնը տոգորված էր բարեացակամ տրամադրութեամբ, նրան չէին վախեցնում տեղական դպրոցները, գրականութիւնը, կուլտուրական ձեռնարկութիւնները։ Լաւ հասկանալով, որ առանց այդպիսի գործօնների երկիրը երբէք չէ կարող հաղորդակից լինել ընդհանուր քաղաքակրթութեան, երբէք չի ստանայ խաղաղ առաջադիմութեան համար անհրաժեշտ պայմանները, փոխարքայական իշխանութիւնը յայտնի չափով հովանաւորում էր տեղական ազգաբնակութեան մէջ նկատվող մտաւորական շարժումը։

Իշխան Վորոնցովը Թիֆլիսում ռուսաց թատրոն հաստատեց, բայց մի և նոյն ժամանակ վրացերէն ներկայացումների սկիզբն էլ դրեց և պատճառ դարձաւ, որ հայերէն «Կովկաս» լրագիրը հրատարակվի, մի լրագիր, որ ռուսահայերի պարբերական մամուլի սկիզբն էր։

Նրա յաջորդ փոխարքայի, իշխան Բարեատինսկու, քաղաքականութեան մէջ խիստ աչքի է ընկնում այն ահագին նշանակութիւնը, որ նա տալիս էր հայոց եկեղեցուն։ Մատթէոսի ընտրութիւնը, փառաւոր ճանապարհորդութիւնը Կ. Պոլսից մինչև Էջմիածին այդ քաղաքականութեան յաղթանակն էր։ Նա ամեն կերպ աշխատում էր, որ ռուսահայերը սերտ կապերով կապվեն թիւրքահայերի և պարսկահայերի հետ և այդ կապերը հաստատված լինէին մի ձգողական ոյժի վրա, որ պիտի ներկայացնէին ռուսահայերը շնորհիւ իրանց կրթական հաստատութիւնների, իրանց մտաւոր առաջադիմութեան և նիւթական բարեկեցութեան։

Այդ բարեացակամութիւնն էր պատճառ, որ երբ Գաբրիել վարդապետ Այվազովսկին, հեռանալով Պարիզից, ուզում էր Հայկական վարժարանի նման դպրոց բաց անել Ռուսաստանում, Բարեատինսկին այդ մտքի եռանդուն պաշտպան հանդիսացաւ։ Նա միջնորդում էր, որ Այվազովսկու դպրոցը արտասահմանից բոլոր կարևոր առարկաները առանց մաքսի և ցենզուրայի ստանայ, որպէս զի կարողանայ անարգել և լայն չափերով գրաւել հայ հասարակութեան ուշադրութիւնը, մանաւանդ հաւաքել իր յարկի տակ որքան կարելի է շատ թիւրքահայ ուսանողներ։

Հեռուն չը գնալու համար բաւականանանք և այս մի քանի յիշատակներով։ Փոխարքայական շրջանի բարեացակամ կարգերի վերջին արտայայտութիւնն էր հայոց ուսուցչական առաջին ժողովը, որ տեղի ունեցաւ 1882 ի ամառը։ Այնուհետև, երեք տարի էլ չանցած, հայոց դպրոցները փակվում էին։

Ի՞նչպէս են մեր երկրում հասկանում այդ անցեալը։ Եթէ իշխան Վորոնցովի և նրա յաջորդի արիստոկրատիական սիստեմ, աջողութիւն չունեցաւ, ինչպէս իրաւացի նկատում է ռուս լրագիրը, այդ դեռ չէ նշանակում, թէ այդ երկու փոխարքաների ժամանակը ապարդիւն անցաւ Կովկասի համար։ Կեանքը 40-ական թուականների դեռ զարգացման այն աստիճանի վրա էր գտնվում, որ միայն ազնուական և բուրժուա դասակարգերն էին հրապարակի վրա աչքի ընկնում, այն կազմում։ Բնականաբար նրանց վրա էլ աւելի ուշադրութիւն պիտի դարձնէր իշխանութիւնը։ Զը մոռանանք ժամանակի հասկացողութիւնները, հասարակական պատրաստութիւնը։

Ամենագլխաւորը, էականը ոգին է։ Արիստոկրատիական հովանաւորութեան, խնամակալութեան մէջ էլ նկատվում է այդ էականը,—հասարակաց բարիքը, երկրի տեղական ոյժերի կարևորութիւնը։ Երկիրները կառավարվում են հանրաշահ իդէալներով. կեանքը ստիպողաբար հաշիւ է պահանջում թէ ինչ է արված, ինչ նոր բան է աւելացրված կուլտուրական և մտաւոր առաջադիմութեան համար։ Բարեացակամ իշխանութիւնը դրական աշխատանքի աջակից պիտի հանդիսանայ։ Ստեղծագործել և ոչ թէ բաւականանալ միմիայն արգելքի, խոչընդոտի դերով։

Իսկ ստեղծագործել կարելի է հասարակական տարրերի հաշտ ու համերաշխ գործունէութեամբ։ Այդ տարրերը պէտք է խրախուսել հաւատով, վստահութեամբ։ Թշնամի նկատել նրանց, հեռացնել նրանց ասպարէզից—նշանակում է աւելորդ տանջանքներ մացնել առաջ անցնելու տենչով կենդանի կեանքի մէջ։

Լ.

ՔԱՂԱՔԱՑԻՆ ՄԻԼԻՑԻԱ

Երբ ջուրը պղտորվում է, ձկնորսները շատանում են։

Պետական կեանքը պղտորվել է Ռուսաստանում և «մութ ուժերը», դրդված մի կողմից շահամոլութեան, կողոպուտի ձգտումից, միւս կողմից էլ պետական որոշ կազմի պաշտպաններից,—ամեն բոպէ կարող են դիմել կոտորածի, անհատական սպանութիւնների ու կողոպուտի։

Ահա այդ հնարաւոր ու շատ հաւանական պատահարների առաջն առնելու համար Մոսկվայի քաղաքային խորհուրդը կանգ է առել միլիցիայի վրա։

Քաղաքային միլիցիա—դա քաղաքաբնակ երիտասարդ ուժերից բաղկացած մի զօրք է, որի միակ պարտականութիւնն է իր մայրենի քաղաքի պաշտպանութիւնը թէ խաղաղութեան ժամանակ ներքին ձկնորսների դէմ և թէ պատերազմի ժամանակ՝ արտաքին թշնամու դէմ։

Մոսկվայի քաղաքային խորհուրդը որոշել է միջնորդել և խնդրել բարձր իշխանութեանը թոյլատրել այդպիսի միլիցիայի կազմակերպութիւնը քաղաքներում, քաղաքների սեփական միջոցներով, առանց ծանրանալու պետական գանձարանի վրա։

Ասում են, որ Օդեսսան արդէն մի այդպիսի հիմնարկութիւն ունի։

Մեր ընթերցողներին երևի լաւ յայտնի է Անդրկասպեան երկրի գեներալ նահանգապետի կոչը։ Նա դիմում է արել բոլոր պարսկական և աւղանական երկիրներին, դրացի Անդրկասպեան շրջանի քրիստոնեայ բնակիչներին, որ գան, պետական հաշուով գնեք ստանան և զինավարժութիւն սովորեն։ Դա անհրաժեշտ է թէ ներքին և թէ արտաքին թշնամիների դէմ պատրաստ լինելու համար։

Այդ նոյն միջոցն աւելի քան անհրաժեշտ է Կովկասի համար։

Եթէ մի այդպիսի հիմնարկութիւն գոյութիւն ունենար Բագուում կամ Երևանում, մենք ամենևին ականատես չէինք լինի այն գաղանական արիւնարբութիւններին, ինչ որ տեղի ունեցան։

Բացի այդ ներքին սարսափների վտանգներից, մենք ունենք և մի աւելի մեծ վտանգ։ Մեզ դրացի Թիւրքիան։

Իսկ այդ դրացիութիւնը մեզ պէտք է ստիպէ լուրջ մտածել միլիցիայի մասին և հարկաւոր դիմումներն անել։

Խաժակ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ

Փետրվարի 10-ին

Այսօր հողին յանձնեցին վաղաթառամ Պօղոս Բէբուրեանի մարմինը։ Հանգուցեալը դեռ 39 տարեկան էր. նրա մահը մեծ վիշտ պատճառեց իր շրջապատողներին։ Հանգուցեալը իր առաքինի, հեզ, մարդասէր և խոնարհ բնաւորութեամբ մի օրինակելի ոնձն էր։ Նա թողեց և գրականութեան մէջ մի փոքրիկ, բայց հաւեստ անուն, «Շիրակեցի» ստորագրութեամբ։ Դեռ 1885 թուականներից թղթակցում էր «Մշակին», նիւթ ընտրելով իր թղթակցութիւնների համար ժամանակի կարիքները և ժողովրդի ցաւերը։ Բացի թղթակցութիւններից նա գրում էր և ճանապարհորդական տպաւորութիւններ, ժողովրդական ասանդութիւններ, ծէսեր, հանգուցեալը լոյս էր ընծայել մի քանի փոքրիկ գրքոյկներ—պատկերներ իրական կեանքից։

Հանգուցեալը առևտրական էր և շատ էր սիրում գրականութիւնը. նա գիշերները քունը կորում էր, չը մտածելով իր նոյն իսկ առողջութեան վրա, որ կամաց կամաց քայքայվում էր թոքերի հիւանդութիւնից, և անընդհատ գրում էր։

Այստեղ աւելորդ չեմ համարում աւելացնել, որ հանգուցեալը դեռ 5 տարեկան հասակից ունենալով տանջող աչքացաւ, նրան խիստ արգելեցին գրել-կարդալ, բայց այնպիսի եռանդ ունէր նա դէպի գրականութիւնը, որ երբ նրան ուսումնարան չը տուին և պատուիրում էին չը պարապել, նա գտնում էր ածուխ և տախտակների և պատերի վրա սովորեց գրել, և շատ շուտով գեղեցիկ կերպով կարդալ։ Ունէր վերին աստիճանի սուր միտք և շատ շուտ էր ըմբռնում կարդացածը։ Հանգուցեալը արժանացաւ գրականական և յոբդորական ինքնագիր նամակների հանգուցեալ Գրիգոր Արծրունուց, Բաֆֆիից, Գամառ-Բաթիպայից և այն ժամանակվայ ականաւոր անձինքներից։

Յուղարկաւորութեանը ներկայ էր մեծ բազմութիւն, դրված էին իր յարգողներից հինգ պսակներ. երբ փողոցով դագաղը տանում էին, բոլոր խանութները փակեցին։ Տողերիս գրողը մի փոքրիկ դամբանական խօսեց եկեղեցում, դրուատելով նրա տուած օգուտներին և իր ժամանակին նրա արած թէ գրական և թէ անձնական աշխատութիւններին։

Մ. Ոսկանեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

I

Թիֆլիս, մարտի 15-ին

Ի յիշատակ իմ հանգուցեալ ուսուցիչ և բարեկամ Մակար Եկմալեանի, փոխարէն աւանդական պսակի, խնդրեմ ընդունել 25 ռուբլի յօգուտ Բագուի աղէտի զոհերի։

Երդուեալ հաւատարմատար՝

Պողոս Դոլուխանեան

II

Բագու, մարտի 16-ին

Բագուի հայոց Մարդասիրական ընկերութեան վարչութիւնը սրանով յայտնում է, որ Բագուի աղէտից վնասվածների օգտին բացի արդէն յայտարարուածներից, վարչութիւնս ստացել է հետևեալ գումարները.

1. Աստրախան քաղաքից պ.պ. Աւթանդիլեանի, Թելեթեանի, Խաչատուրեանի և Եղեանի միջոցով երեք հազար ութ հարիւր ութ (3808) ռուբլի, որից (808) ութ հարիւր ութ ռուբլի տուած է համաձայն պարոնների ցանկութեան քաղաքային յանձնաժողովին, իսկ մնացած 3000 ռուբլին ընկերութեանս տրամադրութեան տակ։

2. Թիֆլիսի Վեհափառ Կաթողիկոսից հաստատած կոմիտէից չորս հազար ռուբլի (առաջ ստացված է եղել էլի 4000 ռ.)։

3. Ստավրոպոլից տիկ. Ն. Կ. Կազարեանից երկու հարիւր քսան (220) ռուբլի։

4. Իշխ. Մ. Թումանեանից, Թիֆլիսից 332 ռ. 94 կ., որից, համաձայն նրա յայտնած ցանկութեան, կէսը, այսինքն 166 ռ. 47 կ. տրված է քաղաքային կոմիտէին։ Այս գումարը իշխ. Թումանեանը ուղարկել է թատրոնական կոմիտէի կողմից, որը տուել էր ներկայացում այդ նպատակով։

5. Բալախանի խանութպաններից և այլ անձերից տիկ. Շ. Մայիլեանի ձեռքով 31 ռ. 25 կոպէկ։ Ընդամենը ստացված է 8392 ռ. 19 կ., որից 974 ռ. 47 կ. տրված է քաղաքի կոմիտէից, իսկ մնացած 7417 ռ. 72 կ. մնում է վարչութեանս տրամադրութեան տակ։ Այդ բոլոր ստացված նուիրատուութիւնների համար վարչութիւնս յայտնում է իր խորին շնորհակալութիւնը։

Նախագահ վարչութեան՝ Ս. Յարութիւնեան

Քարտուղար անդամ վարչ. Յ. Քոչարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կօբէկօի յանձնաժողովը 3 նիստ նուիրեց գրքերի վրա դրվելիք ցենզուրայի մասին։ Երեք նիստերում հարցը քննելուց յետոյ՝ վճռվում է, 18 ձայնով 2-ի դէմ, որ բոլոր ինքնուրոյն և թարգմանական թէ բրօշիւրները և թէ գրքերը պէտք է ազատ լինեն նախնական ցենզուրայից. միայն տպագրելուց յետոյ ամեն մի գրքից մի-մի օրինակ պէտք է ներկայացվի ցենզուրայի, որը 7 օրվայ ընթացքում կամ թուղթ կը տայ գիրքն ազատ տարածելու մասին, կամ կը բռնէ և կը ներկայացնէ դատարան, եթէ նրանում որ և է յանցաւոր բան գտնի։

—

Օղուրգէթից հաղորդում են, որ տեղական գործակալ Դաւիթ քահանայ Դումբաձէին դատի է ենթարկել գեներալ-մայիոր Ալեխանով-Աւարսկին, որովհետև նա հրաժարվել էր կրօնական ծէսերով թաղել իշխան Տ. Նակաշիձէին և Լ. Գուրիէլուն, որոնց սպանութիւնը, ինչպէս յայտնի է, քաղաքական պատճառներ ունէր։

—

Գօրու գաւառապետը եկել է Թիֆլիս։ Նա հաղորդել է Թիֆլիսի նահանգապետին, որ իր գաւառի գիւղական դիւանատներում գործերը բոլորովին կանգ են առել, որովհետև շատ տեղերում գիւղացիները սպառնալիքներով հեռացնում են պաշտօնատար անձերին իրանց պաշտօններից, իսկ շատ տեղերում գիւղացիները յայտնում են, որ այլ ևս ոչ մի կօպէկ չեն տալու այդ հաստատութիւնները պահելու նպատակով։

—

Լրագիրներում լուրեր երևացին այս օրերս, որ Կօբէկօի յանձնաժողովի լուսամիտ և հանկարելի անդամներից մէկը, Նարվայի եպիսկոպոս Անտոնինը հրաժարվել է այդ յանձնաժողովից։ «Бирж. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ այդ լուրը սուտ է—եպիսկոպոսը մասնակցում է յանձնաժողովին։

—

Արդարադատութեան մինիստրութիւնը մշակել է մի շարք հարցեր, որ պէտք է ենթարկվեն քննութեան և բարեփոխման։ Այդ հարցերի մէջ ամենախոշոր նորութիւնն է ընտրովի հաշտարար դատաւորների հիմնարկութիւնը։ Այդպիսի հաշտարար դատաւորներ Ռուսաստանի մի քանի մասերում դեռ ևս կան։ Արդարադատութեան նոր մինիստր Մանուխինը, ինչպէս լսել է «Новости» լրագիրը, պաշտպան է այդ հիմնարկութեան, այնպէս որ հիմք կայ յուսալու, թէ այդ հաստատութիւնը կը վերանորոգվի նախկին հիմքերով։

—

Գանձակում վաճառական Սուքիասեանի տունը մտնում են մարտի լոյս 15-ի գիշերը երկու դիմակաւորված չարագործներ և կողոպտելով մի բաւական խոշոր գումար, փախչում անյայտանում են։

—

Գանձակից հեռագրում են «Кав.»-ին, որ մարտի 16-ի գիշերը ժամը 2-ին մի քանի անյայտ անձեր յարձակվեցին Շամախու գնդի հրամանատարի տան առաջ կանգնած պահապան զինուորի վրա՝ հրացանը խլելու նպատակով։ Պահապանը կարողանում է հրացանը կրակել և այդ ձայնից դուրս են թափվել զինուորներ, որոնք ընկել են չարամիտների ետևից, բայց նրանք փախել ազատվել են։

—

«Слово» լրագիրը հաղորդում է. որ զինուորական մինիստր Սախարովը թողնում է իր պաշտօնը։ Նրան իբր յաջորդ անուանում են ինֆանտէրիայի գեներալ Կօմարովին և զինուորական մինիստրի դիւանի գլխաւոր գեներալ լէյտէնանտ Բէդիգերին։

—

«Черн. В.» լրագրում տպված է Ներքին Ագարիայի մահմեդական ազգաբնակութեան խառնակութիւնների նկարագրութիւնը, որ արել է մի գիւղական ուսուցիչ։ Գիւղացիները յարձակվել են Ցխմօրի և Քէդի շրջանների դատարանների վրա և փակել նրանց, ասելով, որ մեզ հարկաւոր է միայն մի դատաւոր և ոչ այս երկու անպէտք հիմնարկութիւնները, որոնք ամեն տարի մեզանից կլանում են 3000 ռուբլի և գտնվում են երկու այնպիսի գիւղերում, որոնց մէջ հեռաւորութիւնն ընդամենը 100 սաժէն է։

—

Ներքին գործերի մինիստրը շրջաբերականով յանձնարարել է Թիֆլիսի նահանգապետին անյապաղ վերացնել այն բոլոր արգելքները և սահմանափակումները, որ կան հնադանդների և այլ ազանդաւորների վրա և որոնք օրէնքով նախատեսված չեն։ Բացի դրանից, յանձնարարվում է խիստ հսկել, որ այսուհետև որ և է վարչական անձ սահմանափակող կարգադրութիւններ չանէ այդ առիթով, առանց օրէնքի վրա հիմնվելու։

—

Պարիզից հեռագրում են «Русь»-ին. «Բօրսայի տրամադրութիւնը, որ ռուսական արժէքների վերաբերութեամբ շատ խախուտ էր վերջերս և նոյն իսկ այդ արժէքների գներն ընկել էին, այժմ սկսում է մի քիչ լաւանալ։ Ֆինանսիստներն այդ բացատրում են նրանով, որ ստացվեցին լուրեր, թէ ռուսական բանակը բոլորովին փշրվել, ջարդվել, նոյն իսկ գրեթէ ընկել բայց յետոյ երևաց, որ բանակը նահանջել է և յոյս կայ նորից դէրքեր բռնելու և դիմադրելու։ Բաբերաբար տպաւորութիւն է գործում նաև այն լուրը, որ Բուլիգինի յանձնաժողովը շուտով գործը կը սկսէ։ Պարիզում բոլորը մեծ յոյս ունեն, որ այդ յանձնաժողովի աշխատանքները կը բարելաւեն երկրի ներքին վիճակը։ Այդ երկու հանգամանքները բաւական բարձրացրին հաւատը դէպի ռուսական վարկը»։

—

Մարտի 9-ին կայացել է Պետերբուրգում պետական խորհրդի արտակարգ նիստ, ուր քննութեան պէտք է առնվէին ֆինանսների մինիստրի առաջարկները աւելացնելու մի քանի հարկեր ռուս-եապօնական կռուի առաջացրած ծախքերը ծածկելու համար։ Ֆինանսների մինիստրը առաջարկում է հետևեալը։ Աւելացնել. 1) Առանց վճարի մէկից միւսին անցնող կայքերի տուրքերի վրա 3 միլիոն ռուբլի, որ անցեալի հետ համեմատելով՝ լինում է 50% յաւելում։ 3) Գարեջրի վրա ակցիզը աւելացնել 33⅓%, որ կը տայ 3,300,000 ռ. աւելորդ։ 3) Լուցկու ակցիզն աւելացնել 800 միլիոն ռուբլով, որ կը կազմէ 100% յաւելում։ 4) Դրօժի կամ ժաժիկի ակցիզի վրա աւելացվում է 2,800,000 ռ.։ 5) Նաւթային իւղերի ակցիզը՝ 2,650,000 ռ. և 6) կենսաթոշակի դրամագլխի համար հանումների վրա աւելացվում է 2 միլիոն։ Բոլոր յաւելումները կը տան 21,750,000 ռ.։ Բայց որովհետև կարող են այդ ենթադրութիւնները չը տալ սպասված բոլոր եկամուտները, այդ պատճառով մինիստրը յաւելումը ենթադրում է 18 միլիոն ռուբլի։ (Сынъ От.)

—

«С. П. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ ներկայումս նորից հարց է յարուցված հաստատել գործարանական տեսչութիւնների պաշտօնը։ Այդ կին վերահսկիչները հսկելու են թէ կին և թէ անչափահաս բանուորների շահերի վրա գործարաններում և այլ արդիւնաբերական հիմնարկութիւններում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Խաղաղութեան համար։ «Matin» լրագրի Լօնդօնի թղթակիցը մարտի 20-ին հեռագրել է հետևեալը. «Երէկ երեկոյեան տեսայ կոմս Հայաշիին (Եապօնիայի Լօնդօնի դեսպանը), որը ինձանից խնդրեց անել հետևեալ կարևոր յայտարարութիւնը։ «Անցեալ յուլիս ամսին, երբ պ. Վիտտէն գտնվում էր Բերլինում, մի գործակալ եկաւ ինձ մօտ յատկապէս նրա կողմից և մինիստրների կոմիտէի նախագահի անունով, ինձնից խնդրեց թէ տրամադիր եմ արդեօք եւրոպական մի որ և է քաղաքում հանդիպել նրա հետ խաղաղութեան հարցի մասին բանակցելու համար։ Պատասխանեցի, որ պատրաստ էի ընդունել այս առաջարկութիւնը։ Պ. Վիտտէ Բերլինից գնաց Պետերբուրգ, և, մի որոշ ժամանակ, ես նրանից որ և է լուր չը ստացայ։ Խնդրում եմ յայտարարել պատմութեան այս կէտը ամբողջ աշխարհին ձեր լրագրի միջոցով»։

Վերջին զինուորական խորհրդի վճիռը։ «Echo de Paris» լրագրի Պետերբուրգի թղթակիցը հաղորդում է վերջին զինուորական խորհրդի վճիռը Յարսկի-Սելօում։ «Հեռաւոր Արևելք կուղարկվի Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաեվիչ, որը յանձնարարութիւն ունի պարզելու զօրքի դրութիւնը, մարդկանց թիւը և պաշարների քանակութիւնը և ընդհանրապէս իմանալով, թէ այժմ ռրպիսի նշանակութիւն կարող են ունենալ ռուսական պատերազմական ոյժերը։ Նա կը քննէ թէ արդեօք Կուրոպատկինը ստացել է իր ժամանակին այն, ինչ որ պահանջում էր, որովհետև վերջինս գանգատվում էր, որ իր պահանջները չէին կատարվում։ Մեծ Իշխանի եզրակացութեան հիման վրա վերջնականապէս կը վճռվի այն հարցը թէ արդեօք պէտք է նոր շօմանդակ զօրքեր ուղարկել Հեռաւոր Արևելք, թէ անհրաժեշտ է խաղաղութիւն։ Այդ միջանկեալ ժամանակամիջոցում կը զբաղվեն այն հարցի քննութեամբ, թէ ինչ միջոցով կարելի կը լինէր վերջ տալ պատերազմական գործողութիւններին, բայց Եապօնիայի հետ որ և է ուղղակի համաձայնութիւն կայացնելու փորձեր չեն անվի։ Յամենայն դէպս Ռուսաստանը ամօթալի խաղաղութիւն չի ընդունի, ինչ էլ որ լինեն Մեծ Իշխանի եզրակացութիւնները և զեկուցումը։ (Слово) (Тлф.)։

Կուրոպատկինի խնդիրը։ «Lokal Anzeiger» լրագրի տեղեկութիւնների համեմատ, Կուրոպատկինը գտնվում էր արդէն ճանապարհի վրա դէպի Ռուսաստան, բայց յանկարծ յետ վերադարձաւ և Լինէվիչի հետ տեսակցելուց յետոյ հեռագրեց Պետերբուրգ, թէ չէր կամենալ բաժանվել բանակից և թողնել պատերազմի բեմը, որը սրբազան է դարձել իր համար։ Գեներալ Լինէվիչ իր կողմից պաշտպանեց Կուրոպատկինի խնդիրը։ Կուրոպատկինի վարմունքը ընդհանուր տրամադրութեամբ ընդունվեց զինուորական և թէ քաղաքացիական շրջաններում։ Մի քանիսները կարծում են, որ Կուրոպատկին կը որոնէ մահ պատերազմի դաշտում իր սխալները քաւելու համար։

Մուկդէնի մօտ պարտութեան պատճառները։ «Echo de Paris» լրագրի թղթակցի խօսքով, Մուկդէնի մօտ կռիւը տանուլ տրվեց մասամբ այն պատճառով, որ գեներալ Բիլտերինգ, 3-դ բանակի հրամանատարը, որ փոխարինեց Կաուլբարսին, որը 2-դ բանակի հրամանատարութիւնն էր ստանձնել, անպէտք զօրապետ հանդիսացաւ։ Այն վայրկեանին, երբ Կուրոպատկին յետ մղեց եապօնացիներին դէպի արևմուտ, նա թոյլ տուեց պատռել իր ճակատը Մուկդէնի և Ֆուշանի միջև, որի հետևանքն էր և այդ պարտութիւնը։ Կուրոպատկին ստիպված էր անձամբ ստանձնել 3-րդ բանակի հրամանատարութիւնը իր զօրքերը փրկելու համար։ Նրա կօնֆլիկտը գեներալ Գրիպպէնբերգի հետ վատ վախճան ունեցան երկուսի համար ևս։ Գրիպպէնբերգի յանկարծակի հեռանալը Մանջուրիայից ամենակրիտիքական բօպէում շատ վատ տպաւորութիւն գործեց զօրքի վրա. բոլորը դատապարտում էին նրա վարմունքը։ Պետերբուրգում նա, բացի Ալէքսանդրեան կօմիտէի անդամ նշանակվելուց, ուրիշ որ և է պաշտօն չը ստացաւ, ըստ երևոյթին, առանձին սէր չէ վայելում բարձր շրջաններում։ (Нов.)

Նահանջման մանրամասնութիւնները։ «Loc. Anz.» լրագրի Բերլինի թղթակիցը նկարագրում է Մուկդէնից մեր զօրքերի յետ նահանջման տխուր պատկերը։ Հակառակ Լիաօեանից յետ նահանջման, որ տեղի ունեցաւ կատարեալ կարգապահութեամբ, այստեղ կատարեալ քաոս էր տիրում։ Կարգապահութիւնը մոռացած զինուորները աւազակութիւն էին անում։ Դիզէրտիրները այնքան շատ էին, որ ստիպված եղան առանձին միջոցների դիմել՝ նրանց տեղաւորելու համար իրանց զօրամասերում։ 2-դ և 3-դ բանակը յետ էին նահանջում մի և նոյն ճանապարհով, որը խռնված էր սայլախմբերով, և զօրքերի այդ կուտակումը աւելի ևս մեծացնում էր խառնափնթորութիւնը։ Մի և նոյն ժամանակ ճանապարհներն ևս վատ էին և թշնամու դիտաւորութիւնների և շարժումների մասին տեղեկութիւնների բացակայութիւնը աւելի ևս սաստկացնում էր երկիւղը։ Գեներալ Կուրօկիի գլխաւոր բանակից, անգլիական աղբիւրներից մարտի 6-ից ստացված տեղեկութիւնների համեմատ, ամեն ինչ, մինչև անգամ եղանակը նպաստում է եապօնացիներին։ Լեռներում կանգնած են ցրտեր, յաճախակի փոթորիկներով։ Յետ նահանջումը օրէցօր աւելի անկարգ է դառնում։ Սկզբում ռուսները թաղում էին իրանց սպանվածներին, այժմ գցում են նրանց ճանապարհի վրա։ Ամենախոշոր վերջապահ ընդհարումը մարտի 1-ին էր Խունխէից դէպի հիւսիս բարձրունքների վրա, ուր ռուսները խրամատներ փորեցին և փորձում էին պաշտպանել, բայց այնու ամենայնիւ երկու ժամ շարունակվող հրաձգութիւնից յետոյ թողեցին իրանց դիրքերը։ Եապօնացիները խլեցին 5-դ և 19-դ հրացանաձիգ գնդերի դրօշակները։ Մեծ մասամբ գերի ընկած զօրաբաժինները կարողանում էին այրել իրանց դրօշակները, նախ քան անձնատուր լինելը։ Գերիների թիւը աճում է օրէցօր։ Ասում են, որ Կուրոպատկին մուկդէնեան կռուի առաջին օրերին զօրքերի գլուխ կանգնած ինքն էլ կռուում էր և վիրաւորվեց եապօնական ռումբի կտորով։ (Нов.)

Եապօնացիների մուտքը Մուկդէն։ Եապօնացիների պաշտօնական մուտքը Մուկդէն կայացաւ մարտի 6-ին։ «Ind. Belge» լրագրի թղթակիցը գեներալ Օկուի բանակում այսպէս է նկարագրում այդ պատկերը. «Մուկդէնի գլխաւոր փողոցում հարաւային դռներից մինչև մարշալ Օյամայի գլխաւոր բանակը երկու երկար շարքերով կանգնած էին երկրորդ բանակի զօրքերը։ Եապօնական գեներալիսիմուսին ուղեկցում էր որպէս պատուաւոր պահակ գեներալ Օկուի ընդհանուր շտաբը։ Առջևից ընթանում էին զինուորական երաժշտութիւնը, հետևակ գվարդիան գլխաւոր բանակից և հեծելազօր զօրաբաժինը։ Ընդհանուր շտաբի ներկայացուցիչների թուում գտնվում էին բարոն Կոդամա և պրինց Ֆուշու-

ղիմա։ Ապա ընթանում էին երկրորդ բանակի ընդհանուր շտաբի օֆիցէրները, օտար պետութիւնների զինուորական կցորդները և թղթակիցները։ Զօրքերը հպարտութեամբ տանում էին պատառոտված և ցնցոտիների փոխարկված իրանց դրօշակները, որոնք սեւացած էին ծուխից։ Մարշալ Օյաման ծերացած է երևում և նրա դէմքի վրա երևում են յոգնածութեան հետքեր։ Բոլոր մեծ քաղաքներում, ուր մտնում էին եապօնացիները, չինացիները հանդիպում էին նրանց պատուով—զօրքերով և դրօշակներով։ Խարբինը, թղթակցի խօսքով, արդէն լցված է ռուսներով։

Կոտորած Մուկդէնում։ Գերի եապօնացիները պատմում են այն սարսափելի կոտորածի մասին, որ տեղի ունեցաւ Մուկդէնի փողոցներում մի կողմից ռուսների և միւս կողմից եապօնացիների և չինացիների մէջ։ Վերջին ռուսաց մեծ զօրաբաժինը յանկարծ ենթարկվից յարձակման չինացիների և խունխուզների կողմից, սրանց հետ էին և մի քանի եապօնացիներ։ Չինացիները փակեցին քաղաքի դուռները, լցրին առանց այն էլ նեղ փողոցները։ Եապօնացիների ասելով, ոչ մի ռուս չազատվեց։ (Русь)։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Ռաշտ, մարտի 6-ին

Այսօր, ս. Մեսրովը եկեղեցում Ռաշտի հայ հասարակութիւնը հոգեհանգիստ կատարեց Բագուի անմեղ զոհերի յիշատակին։ Հոգեհանգիստը ուշ կատարելու պատճառը այն հանգամանքն էր, որ Բագուի դէպքերը ազդել էին տեղիս մահմեդական տարրի վրա և ինչ որ «շշուկներ» առաջացրել, մանաւանդ որ «մուհարէմի» պատճառով «դաստանները» շրջում էին քաղաքում և հայերին զգուշացնում էին որ և է հաւաքումից, որպէս զի մահմեդականներին գրգռելու մի առիթ տուած չը լինեն, մինչև նրանց այդ կրօնական սգի օրերի անցնելը։ Այդ է պատճառը, որ այս տարի Վարդանանց տօնի առթիւ դպրոցները հանդէս չունեցան և յետաձգվեցին մի քանի երեկոյթներ ու ներկայացումներ։

Այն ներքին ոյժը, այն անյայտ թշնամին, որը առաջացրեց Բագուի աղէտը, այստեղ մեզ մօտ ևս կայ և գործում է. նա ևս աշխատեց օգտվել ժողովրդի տրամադրութիւնից և բարդութիւններ առաջացնել։ Բայց շնորհիւ կառավարութեան աչալրջութեանը, շնորհիւ տեղիս դատաւոր Շանզադէի գործադրած խիստ միջոցներին, վտանգն անցաւ։

Անյայտ չարագործները սկզբներում զանազան «վալիզներով» պատմում էին Բագուի դէպքերը պարսիկների մէջ և պղտորում հասարակութեան միտքը։ Չնայելով տեղացի պարսիկների խաղաղ ընաւորութեանը, Բագուցի թուրքերը—որոնք բաւական շատ են—աշխատում էին վրէժխնդիր լինել տեղիս հայերից, մանաւանդ ռուսահպատակ հայերից։ Այդ մասին նոյն իսկ նրանց մէջ խորհրդակցութիւններ է լինում. դիտում են բարձրատիճան կրօնաւորներից թոյլտուութիւն ստանալու, որոնք մերժում են և իրանց դժգոհութիւնը յայտնում։ Կրկնում եմ, եթէ նորին բարձրութիւն Աղուտի-Սուլթան Շանզադէի (Գիլանի նահանգապետը և նորին մեծութիւն Շահի որդին) խիստ միջոցները չը լինէին, բազուցիները կարող էին անկարգութիւններ առաջացնել Մուհարէմի վերջին գիշերը, երբ ըստ երևոյթին կարող էր վտանգ սպասվել, կառավարութիւնից ծպտեալ զինված պահպանները էին նշանակված հայաբնակ փողոցներում։ Շնորհիւ այդ միջոցներին այս տարի սովորականից աւելի խաղաղ անցաւ «Ղաթ»-ի օրը (գլուխներ կարատելու օրը)։

Չեմ կարող չը յիշել, որ ժողովուրդը այստեղ համարեա ինքնապաշտպանութեան ամեն միջոցներից էլ զուրկ է։ Մի թէ մեր հասարակութիւնը այս քան տարվայ արիւնալի դէպքերից յետոյ դեռ չը համոզվեց ինքնապաշտպանութեան անհրաժեշտութեանը, որը այժմ գոյութեան ամենաանհրաժեշտ պայմաններից մէկն է։ Թող չը մոռանայ ժողովուրդը մարտի 3-ի գիշերը, երբ նա սարսափով սպասում էր լուսանալուն, մատնված էր ամեն պատահականութեան և ոչնչով չէր կարող պաշտպանվել հարկաւոր դէպքում մինչև օգնութեան հասնելը։

Մի քանի խօսք ևս մեր հասարակութեան պարտականութեան մասին։

Պարսկահայ ժողովրդի բարոյական պարտականութիւնը լոկ հոգեհանգիստներով չի վերջանայ. հարիւրաւոր անմեղ զոհերի ընտանիքները գտնվում են ամենաթշուառ վիճակում, հարկաւոր է դրանց օգնութեան ձեռք տալ։ Այս ծանր բեռը չը պիտի թողնել միմիայն ռուսահայի վրա. պարսկահայն էլ իր լուման պիտի ձգէ դժբախտ զոհերի որբերի արտասուքը սրբելու—թէկուզ ամենաչնչին մի բան լինի դա։ Այս սրբազան մարդասիրական պարտականութիւնը նրա վրա աւելի է ծանրանում, քանի որ նա վաղ ժամանակներից միշտ բարերարվել է ռուսահայերից, յատկապէս բագուցիներից։ Ուրեմն այսօր մենք ինչու պիտի մեր ականջները փակած պահենք թշուառութեան այդ վայրից եկած հառաչանքների դիմաց։ Մեծ գումարներով չենք կարող օգնել, գիտեմ, բայց մեր չնչին կօպէկներով, մեր սրտերով գոնէ մասնակից լինենք նրանց վշտերին, չը զլանանք կատարելու այս բարոյական պարտքը դէպի մեր տարաբախտ եղբայրները։

Կարելի էր Պարսկաստանի ամեն մի հայաբնակ տեղերից արձագանք տրվէր նրանց վշտերին, նոյն իսկ միացած մեր հարևան և բարեկամ բուն պարսիկ ժողովրդի հետ։ Դրժբախտութեան օրերին եթէ մենք միմեանցից օտար զգանք, ապա ի՞նչը պիտի լինի մեր բարոյական, մարդասիրական կապը։

Ս. Գրիգորեանց

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

16 մարտի

ՏՈԿԻՕ։ «Օսակա Մայինոչի» լրագրում զետեղված է եապօնական երկու զօրագնդերի ոչնչացման դէպքի նկարագրութիւնը։ Լիկունսո գիւղն էր այն դիրքը, որ պէտք է գրաւէին։ Յարձակումն սկսվեց փետրվարի 22-ին։ Եապօնացիները առաջ են շարժվում սողալով։ Մօտենալով, նրանք ոտքի կանգնեցին և հակառակորդի վրա ձեռքի ռումբերի կատաղեալ կարկուտ թափելով հասան գիւղին։ Ռուսները կատաղի դիմադրութիւն ցոյց տուին։ Փողոցներից անցնելն անհնարին էր թափված դիակների ու վիրաւորների կոյտերի պատճառով։ Ճաշից յետոյ ռուսաց զօրաբանակը համարձակ հակայարձակում գործեց։ Երկու ժամ անցած, կատաղի կռուից յետոյ եապօնացիները շրջապատված էին և ստիպված էին խրամատների յետևը պաշտպանվել։ Շուտով նրանց ռազմամթերքը վերջացաւ. նրանք սկսեցին հաւաքել ռուսների փամփուշտագօտիները, բայց նրանց դատարկ գտնելով, սպանվածների դիակների վրա էին որոնում փամփուշտներ։ Կորուստները սարսափելի էին. գնդապետ Իշիօկան սպանված է. գնդապետ Տակխուշին ծանր վիրաւորված։ Զորս դրօշակակիրներ սպանվեցին մէկը միւսի յետևից. Տակխուշին ուղարկեց երկու օֆիցէր և մի զինուոր պահեստի զօրամասից օգնութեան կանչելու, բայց երկու օֆիցէրները սպանվեցին, իսկ զինուորը վիրաւորվեց. սակայն նա կարողացաւ նպատակին հասնել, օգտվելով գիշերվայ մթութիւնից։ Այդ ժամանակ ուղարկեցին ռազմամթերք։ Դեռ մինչև արևի ծագելը եապօնացիները գրաւած պահում էին գիւղը և դրանով իրականապէս խանգարում ռուսներին, որոնք այդ բոպէին հեծեալ զօրքի շարժում էին կատարում։ Առաւօտեան ժամը 11-ին ռուսները յետ նահանջեցին։

ՀՌՈՄ։ Մինիստրութիւնը կազմվեց, Ֆորդէսը մինիստր նախագահ և ներքին գործերի մինիստր է, Տիտտոնին արտաքին գործերի. Ֆինոչիարո Ապրելը — արդարադատութեան. Մայօրանոն ֆինանսների, Կարկանոն գանձարանի կառավարիչ։ Պեդոտտին—զինուորական, ծովապետ Մերքելլոն—ծովային. Բիանկի—ժողովրդական լուսաւորութեան, Ֆերրարիս—ժողովրդական աշխատանքների. Բավան—երկրագործութեան. Մօրելլի Զվալտերոտտին—պոստի։ Մինիստրները երդվեցին։

ՄԱԴՐԻԴ։ Պաշտօնական տեղեկութիւնով հերքվում է անգլիական այն տեղեկութիւնը, թէ Սպանիան մտադիր է Տանժիրում թշնամական ցոյց կազմակերպել Ֆրանսիայի դէմ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մեծ հրդեհ պատահեց Ա. Մ. Ժուկովի իւղի և սապոնի գործարաններում. ոչնչացաւ գործարանի երկյարկանի շինութիւնը. բանւորները հազիւ ազատվեցին. նրանց վերնազգեստները կրակի զոհ դարձան։ Վնասը 300000 ր. է հասնում։

ԼԻՍՍԱԲՕՆ։ մարտի 16-ին։ Վիլհելմ կայսրը ներկայ գտնվեց զօրախաղերին և դիտեց Բեյլեմեան վանքն ու պանթէօնը։ Պորտուգալիայի թագաւորը Վիլհելմ կայսրին այցելութեան կը գայ Բերլին, եկող աշնանը։ Աբքունիքում տեղի ունեցած հանդիսաւոր ճաշկերոյթի ժամանակ թագաւորը առաջարկեց խմել գերմանական կայսրի կենացը, ողջունելով նրան պորտուգալական ժողովրդի կողմից։ Կայսրը խորը զգացվեց և շնորհակալութիւն յայտնեց փառահեղ ընդունելութեան համար։ Կայսրը յայտնեց, որ հաւատում է, թէ երկու պետութիւնների բարեկամութիւնը աւելի պիտի հաստատվի և խմեց թագաւորական զոյգի կենացը, Պորտուգալիային բարգաւաճում մաղթելով։

ՍՕՖԻԱ։ Մարտի 15-ին մինիստրական ճգնաժամի մասին եղած լուրերի ասելով մի քանի թերթեր քննում են իրերի դրութիւնը։ Նրանց կարծիքով Բուլգարիան ենթակայ է քաղաքական ճգնաժամի այն պատճառով, որ ժողովուրդը չէ հաւատում կառավարութեանը, որ ընտրված է իշխանի կողմից և չունի անհրաժեշտ ընդունակութիւն ու յատկութիւն։ Ժողովուրդը այդպիսի կազմը հակասահմանադրական և քաղաքական ուղղութիւնից զուրկ է համարում։ Մինիստրական ճգնաժամի մասին եղած լուրերը ճիշդ չեն. ընդհակառակը իշխանի և մինիստրների միջև կատարեալ համերաշխութիւն է տիրում։

Կ. ՊՕԼԻՍ. մարտի 6-ին։ Չը նայելով պաշտօնական շրջանների լռութեանը և անգլիացիների հերքումին, զինուորական շրջաններում պնդում են, թէ Եմէնի մայրաքաղաքը—Սանան մի քանի օր առաջ անձնատուր է եղել։ Ասում են, թէ անձնատուր լինելուց առաջ կոտորել են օտարահպատակներին։ Սպանել են բազմաթիւ տեղացիների և մօտ հարիւր օտարահպատակների։ Մարշալ Ռիդա փաշան անկարող է պատերազմական գործողութիւններ սկսել խռովարարների դէմ, որովհետև պաշար ու ռազմամթերք չունի, քանի որ զինուորական մինիստրութիւնը հնարաւորութիւն չունի բեռներ ուղարկելու։ Փետրվարին Սանայում միայն 10 օրվայ պաշար կայ. հենց դա է եղել անձնատուր լինելու պատճառը։

17 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Վերջին օրերում Խարբինում տեղի ունեցած սոսկալի հրդեհների մասին եղած լուրերը բոլորովին զուրկ են հիմքից։

ԲԱԳՈՒ, մարտի 16-ին։ Առաւօտեան ժամը 9-ին Սև քաղաքում ատրճանակով սպանել են պրիստաւի օգնական իշխան Միկելաձէին և աւագ ոստիկան Էֆիմուլկինին։ Գնդակներ արձակող հինգ մարդիկ փախել են։ Նրանց որոնում են։

ԴՈՒՐԲԱՆ. Մարտի 16-ին։ Այսօր Բանդունից եկած շոգենաւի մարդիկ հաղորդում են, թէ մարտի 6-ին Մադագասկարից 750 մղոն դէպի հիւսիս արևելք պատահել են բալտիական նաւատորմին՝ բաղկացած 30 պատերազմական նաւերից, 14 ածխանաւերի ուղեկցութեամբ։ Նաւատորմն իր ճանապարհն ուղղել էր դէպի արևելք։

ԼՕՆԴՕՆ. մարտի 16-ին։ Լաւատեղեակ աղբիւրներից հաստատում են, որ եկող ամառը Ֆրանսիական նաւատորմը կայցելէ անգլիական Ջերը և կանգ կառնի Սպետխեդում, որպէս զի այդ ցոյցով ամենրև կերպով հաստատէ Ֆրանս-անգլիական բարեկամական համաձայնութիւնը։ Զեռնհաս աղբիւրից հաղորդում են, որ Եապոնիան իրրև հաշտութեան մի պայման կը պահանջէ 100 միլիոն ֆունտ ստերլինգ պատերազմական տուգանք։ Եապօնացիների կրած վնասները աւելի շատ են, քան թէ Գերմանիայի վնասները ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ. այդպիսով Եապոնիայի պահանջած կոնտրիբուցիան շատ չափաւոր է, համեմատելով 1871 թ. Գերմանիայի պահանջածի հետ։ Այսօր փակվեց եապօնական փոխառութեան ստորագրութիւնը։ Պաշտօնապէս հաղորդում են անգլիական թագաւորի և թագուհու ճանապարհորդութեան ուղեգիծը։ Կօպէնհագէն գընալը փոխված է։

ԵԱԼՏԱ. 16 մարտի։ Մարտի 13-ի աւերումների հիմնական պատճառը այն էր, որ հարաւային ափում հաւաքվել էին մեծ քանակութեամբ անգործ մարդիկ և բօսեակներ։ Շարժառիթն եղաւ այն, որ ոստիկանութիւնը ձերբակալեց մի մուրացկան զինուորի, որը իրան պօրտ-արտուրցի էր ձևացնում։ Հաւաքված ամբոխը պահանջեց ազատել բանտարկվածին, բայց մերժում ստացաւ։ Այդ ժամանակ սկսեցին աւերել ոստիկանատունը և ազատեցին բանտարկած զինուորին, որը ամբոխի ղեկավարը դարձաւ։ Հաւաքված ժուլիկների, բօսեակների, մի քանի հարբած բանւորների և բազմաթիւ դեռահաս պատանիների օգնութեամբ ամբոխը աւերեց միւս քաղաքամասերի ոստիկանատունը և բանտային կառավարութիւնը։ Ճանապարհին թալանում էին խանութները, գլխաւորապէս ոսկեվաճառների։ Սիմֆերեպոլից և Սեվաստոպոլից զօրքերը հետևեալ օրն եկան. դրանից առաջ քաղաքացիներն իրանք կազմակերպել էին ինքնապաշտպանութիւն։ Մեծ վնասներ ունեցան Բեկիրովը—150,000 ռուբլի, Մօրդվինովը—60,000, դեղագործ Լեվին—40,000, ժամագործ Տուտնիկովը—20,000 ր.։ Սարսափն անցաւ։ Թալանվածները վերադառնում են. ազգաբնակութիւնը սկսել է սովորական աշխատանքները։

17 մարտի

ՕԴԷՍՍԱ, 16 մարտի։ Հասաւ պօրտարտուրցիների իններորդ խումբը 133 զինուորներից բաղկացած։

ԼՕՆԴՕՆ։ Բենկենդօրֆը և Դայաշին երկար բացակայութիւնից յետոյ այսօր առաջին անգամ ներկայ գտնվեցին դիպլոմատիական ժամանի իւրաքանչիւր շաբաթ տեղի ունեցող ընդունելութեանը արտաքին գործերի մինիստրութեան մէջ։

ԲԵՐԼԻՆ։ Կօպէնհագէնի ռուսաց դեսպանը այժմ գտնվում է Բերլինում։

ՊԱՐԻԶ։ Գաղութների մինիստրութիւնը տեղեկութիւն է ստացել, որ Մադագասկար կղզու վրա, Բեֆօրօնի մօտ, երկաթուղուց քիչ հեռու գտնված են ոսկու երկու շատ հարուստ հանքեր։

ԳԻԲՐԱԼՏԱՐ, 15 մարտի։ Ալէքսանդրա թագուհին և Վիկտորիա պրինցուհին ժամանեցին և նաւից ափ իջան։

Կ. ՊՕԼԻՍ։ Երէկ ստորագրվեց այն իրադէն, որով պատրիարքին իրաւունք է տրվում սեփական իշխանութեամբ պատրիարքարանի բողոքող անդամների միջնադէպը լուծելու։ Ցունական միսսիան կարծես արհամարհանքով է վերաբերվում դէպի կրէտական շարժումը, սակայն Բ. Դրան ձեռք առած միջոցները անհանգստութիւն են պատճառում։ Սուլթանը հրաման է տուել 60,000,000 ֆրանկ փոխառութիւն անելու, այդպիսով բաւարարութիւն տալով Կոնստանին։ Փոխառութեան քառորդ մասը պէտք է գործադրվի Ֆրանսիայում թնդանօթներ և փոքրիկ նաւեր գնելու։ Սոֆիայի երկաթուղու գիծը շարունակելու վարձատրութիւնը տալու համար փոխառութիւն թոյլատրված է նոյն իսկ հարկաւոր քանակութիւնից աւելի։ Բ. Դուռը ռազմագիտական տեսակէտից անհրաժեշտ է գտել շարժական կազմը։ Ենթադրվում է միաժամանակ յիսուն միլիոնի փոխառութիւն անել։ Գերմանիայում։

ՊԱՐԻԶ։ Վաճառականութեան և արդիւնաբերութեան մինիստրութեան յատուկ մասնաժողովը որոշել է հետևեալ համաշխարհային ցուցահանդէսը կազմել Պարիզում 1920 թ.—երրորդ հասարակապետութեան յիսունամեակին։

ԼՕՆԴՕՆ։ Մարտի 16-ին եապօնական փոխառութեան բաց թողնող հինգ բանկեր առաւօտից շրջապատված էին մարդկանց մեծ բազմութեամբ, որոնք ուզում էին նոր օբլիգացիաներ ձեռք բերել։ Ճաշին արդէն ստորագրութիւններն ամել էին փոխառութեան գումարից 15 միլիոն ֆունտ ստերլինգով։

ԼՕՆԴՕՆ։ Անգլիական պատգամաւորութիւնը, որ գնացել էր Աւղանիստանի էմիրի մօտ, վերջացրեց իր վրա դրված յանձնարարութիւնը և դաշնագիրը կապելով, վերադարձաւ Հնդկաստանի սահմանները։

ԼՕՆԴՕՆ։ Վաշինգտոնից ստացված լուրերի համեմատ չէզօք պետութիւններից մէկը լուրջ կերպով նախազգուշացրել է Եապոնիային, որ ամեն տեսակ միջնորդութեան առաջարկութիւններ անելուց զգուշանայ։ Մի ուրիշ պետութեան կառավարութիւն խորհուրդ է տուել պնդելու, որ բանակցութիւններն սկսվեն անմիջապէս Պետերբուրգում։

ԼՕՆԴՕՆ։ Մարտի 17-ին դուխաբօրների առաջնորդ Վերիգինը հաղորդել է, որ դուխաբօրները երջանիկ են և բաւական Մօրկտոունէի գաղութում։ Նրանք ընդունել են հողի մշակութեան ժամանակակից մէթոդը։ Կանայք նկատելի կերպով զարգացել են հոգեկան տեսակէտից։ Դուխաբօրները արատ կերպով խակական կանաղացիներ են դառնում։

ԼՕՆԴՕՆ։ Լօնդօնում ստորագրվեց Տրանսվաալի սահմանադրութիւնը։ Սպասում են, որ երկու երեք շաբաթվայ ընթացքում սահմանադրութիւնը պարլամէնտի անդամների քննութեանը կը ներկայացվի։

ՎԻԳՕ։ Սպանիական շոգենաւը պօրտուգալական ափի մօտ պատահել է ռուսական մի կրէյսերի, որ գնում էր դէպի հարաւ։

ԳԻԲՐԱԼՏԱՐ։ Պետական քարտուղար Գէյը ժամանեց այստեղ։

ԲԷՐՆ։ Դաշնակցական խորհուրդը հաստատեց այն դաշնագրերը, որոնք կապված են

Ֆրաբսիայի, Բելգիայի, Անգլիայի, Իտալիայի, Շվեցիայի և Նորվեգիայի հետ միջնորդ դատարանների միջոցով քննութիւն կատարելու մասին։

ԲԵԼԳՐԱԴ։ Հոֆմարշալ Զալոկանտիչը մեկնաժարտի կանչեց խմբագիր Պաւլովիչին։ Մեկնաժարտը տեղի ունեցաւ։ Հակառակորդները փոխադարձաբար գնդակներ արձակեցին առանց հետեւանքի։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Նախագահ Ռուզվէլտը ընդունեց Եապօնիայի, Գերմանիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչներին։ Ենթադրում են, որ Ֆրանսիան ու Գերմանիան իրանցից կախված ամեն ինչ անում են, որպէս զի հաշտութեան բանակցութիւնները մատչելի դարձնեն։

ԿՕՊԷՆՀԱԳԷՆ։ Այստեղի արտաքին գործերի մինիստրութիւնը ստացել է եապօնական կառավարութիւնից յայտագիր այն մասին, թէ ռուսական բալտիական նաւատորմի նաւերը ածուխ են ստացել գանիական ջրերում։ Յայտագրի մէջ ասված է, որ Դանիայի վարմունքը չէ համապատասխանում դանիական կառավարութեան յայտարարութեանը չեզոքութեան մասին, այդ պատճառով էլ պահանջվում է 60000 ֆունտ ստերլինգ վճարել ջնաների փոխարէն։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Ամէն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
ՀԻԿՕՂԱՆԻ—9—10 ժ. աչքի. ներքին և նեարդային
Մ. Դ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներակ և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Դ. Ա. ԹՍԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Ա. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Դ. ՍԱԼՕԼՕՎ ատամնաբոյժ. 9—11 ժ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՀԵՐԲԻՆԻՆ—1½-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Գ. Ա. ԹՍԱՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.
Գ. Ա. ԱՐԳԱՋԻՆԻ. Կատարում է միկրո-քիմիական և բակտերիոլոգիական հետազօտութիւններ։
Օ. Ա. ԱՌՎԱՆԻՏԱԿԻ—ատամ. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. գիմել 11—1 ժ.։
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցում ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ։
Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի.

ԲԺՇԿ Ա Պ Ե Տ
Գ. Ա. ՀԱԽՎԷՐԴԵԱՆ
Մասնագէտ միզային և սիֆիլիտիքական հիւանդութիւնների,—ընդունում է հիւանդներին առաւօտեան 12 ժ.—1 ժ. երեկոյեան՝ 6 ժ.—9 ժ.։ Կուկիա, Սեմեոնովսկայա փ. № 20.
(ռ. կ. ե.) 22—30

Բժիշկ Ա. Մխիթարեանց
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վենէրական ախտ ունեցող հիւանդներ ամենայն օր, առաւօտ. 12—2. երեկոյեան 6—8 Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանովի, դեղատան կից։ (տ. օ.) 38—80

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
նախկին օրդինատոր Մոսկվայի համալսարանի կլինիկայի
Ընդունում է յատկապէս միզանցքաստոական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին։ Ընդունելութիւնն ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 6—8 ժամին երեկոյեան։ Բոտիշչևսկի փող. № 1, «պօժարնի կօմանդի» դիմացը. տելեֆօն № 711. (ա. օ.) 7—10

Ծանուցվում է ի լուր ազգայնոց, թէ Թիֆլիսի սրբազան առաջնորդի նախագահութեամբ կազմված է մի Ցանձնաժողով Զէյթարի հրկիզեալների համար նուիրաբերութիւններ ընդունելու և գործադրելու։ Ժողովի անդամներն են՝ տ.տ. իշխանուհի Մ. Թումանեան, Մ. Մզարեուլեան, Վ. Եսայեան, պ.պ. ճարտարապետ Ն. Գրիգորեան, երդ. հաւատարմատարի օգնական Մ. Մնացականեան, բժ. Ն. Կաճկաճեան։
Հրկիզեալներին օգնելու պաշտօնական թոյլատրութիւնն ստացված է Թիֆլիսի պ. նահանգապետից։
Խնդրում ենք նուիրաբերութիւններն ուղարկել Ցանձնաժողովի գանձապահ իշխանուհի տ. Մ. Թումանեանին, Բարեատինսկայա, № 8։ 3—5

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ
Ս. Ա. Ստեփանեան
Ընդունում է առաւօտեան 9—2 և 5—7, Վելեմինսկայա փ. № 8.

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Բ. Նաւասարդեան
Տեղափոխվելով Թիֆլիսից ՐՕՍՏՕՎ
Հիւանդներին ընդունում է 11—12 ժ. առ. և 7—8 ժ. երեկոյեան։
Б. Садовая, 136, д. Бакалова.
(ռ. կ. ե. հ.) 94—100

ԾԱԽՎՈՒՄ Է
մի հատ լիմօնաթի մաշինա իր բոլոր պարագաներով և ամենաընտիր տեսակի «Պերեգօնիյ կուբ» շատ մատչելի գներով։ Տեսնել կարելի է Թիֆլիսում «Արաքս հիւրանոցում, Վիննիչ բեադ փողոց։ Պայմանները իմանալ նոյն հիւրանոցի կառավարչից։ ու. ե. 1—2

Թիֆլիսի Կանանց Ընկերութեան
ԿՕՄԻՏԷՏԸ
որ իր վրա է առել Հեռաւոր Արևելքում հիւանդանոց շինել կովկասցի վիրաւոր և հիւանդ զինուորների համար, յայտնում է իր անդամներին և այդ գործին համակրողներին, որ ընկերութեան ընդհանուր ժողովները տեղի են ունենում ամեն շաբաթ, կիրակի օրերը, ցերեկվայ ժամը 12-ին, նահանգական դատարանի շէմքում։
Հիւանդանոցի համար
ՆՈԻԷՐՆԵՐ
ընդունում է յիշված ընկերութիւնը հետևեալ անձերի մօտ.
Սագարդա—Պասերբակայեայի մօտ, Լերմոնտովսկի փող. սեփ. տուն։
Դաւիդովիչի մօտ, Կօբիյակի փող. № 5.
Ասեեվայի մօտ, Կիրպիչնի փող. № 26.
Պետրոպալովսկայեային, Լաբօրատօրնի փող. № 11, (ժամը 10—12 առաւ.)։
Այտովսկայեայի մօտ, Բարօնսկաեա № 16, (ժամը 4-ից սկսած)։
Չապլիցի մօտ, Կիրօչնի փող., Ամարային կրուժօկի մօտը (ժամը 3—4)։
Ստրաշկեվիչի մօտ, Անդրէեվսկի փող. № 27 (ժամը 3—4) 1—5

ԿԱՐՃ ԺԱՄԱՆԱԿՈՒՄ
Բերլիցի մեթոդով օտարախօսներին սովորեցնում եմ հայերէն և ֆրանսերէն նոյնպէս և՛ թուաբանութիւն ու աշխարհագրութիւն։
Հասցէն Թողնել Веліаминовская № 24 кв. Зарграіанцъ. չ. ռ. կ. 2—3

Յայտարարվում է
ի գիտութիւն թարգմանիչների, որ թարգմանել եմ Ֆելիքս Գրայի
«Մ Ա Ր Ս Ե Լ Ե Ց Ի»
(Les rouges du Midi) վէպը և յանձնել մամուլին։
Մ. Ղարաբէկեան
Թէհրան. 2—3

Նոր լոյս տեսաւ
Գ. ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱՅԻ
մշակած հայկական երգերի
Երկրորդ տետրը
որը պիանոյի համար ներդաշնակել է
ԼԷՕՆԻԴ ԿՆԻՆԱ
Առաջի տետրի գինն է՝ 1 ր., երկրորդի՝ 75 կ., երկու տետրն էլ վաճառվում են Լանկոյի երաժշտական և «Գուտտենբերգի» գրավաճառանոցներում, «Պուզրեսս» խանութում և հրատարակչի—Պ. Կարա-Մուրզայի (ул. Панасевича № 8) մօտ. Նրա մօտ է և պահեստը։ 4—10

Վաճառվում են
Բժ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ
Երկու նոր աշխատութիւնները
I
ՄԷՐ ԵՒ ԽԱՆԴ (մի պատկերով) 20 կ.
II
ԱՆԱՌԱԿՈՒԹԻՒՆ և ՊՈՌՆԿՈՒԹԻՒՆ 20 »
Դիմել՝ Թիֆլիսում «Գուտտենբերգ» և «Կենտրոնական» գրավաճառանոցները, իսկ Բագուում՝ «Сотрудникъ» գրավաճառանոցը։ 25—25

Լոյս տեսաւ մամուլի տակից
ԱԿՆԱՐԿՆԵՐ ՈՒԴԻԱՅԻ և ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ
Գինն է 40 կոպ.
ճանապարհածախսով 50 կոպ.
Դիմել Թիֆլիսում՝ «Գուտտենբերգ» գրավաճառանոցին, Ս. Ռ. Դօվլաթեանին, Ս. Կ. Կաֆիեվին, Յ. Մելիք-Զանեանցին (Բեհբութեար փողոց), իսկ Սիմֆերոպոլում՝ (Ղրիմ) հեղինակին այսպէս.—Симферополь, священ. Г. Овсепьянъ. հ. հ. 12—15

Ազգագրական-Հրատարակչական ընկերութեան հրատարակութեամբ
Լոյս տեսաւ պատկերազարդ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ
XII գիրքը.
Առանձին արժէ 2 ր. XI գրքի հետ 3 ր.։
Բովանդակութիւն
Ռուստամ Զալ, ուսումնասիրութիւն, Գ. վ. Յովսէփեանի. — Առանձամբ և գնամբ ամուսնութիւն՝ Խ. Սամուէլեանի.—Հայ աշուղներ՝ Գ. Լեոնեանի.—Ալաշկերտ՝ Նժդեհեանի.—Փշրանքներ ժողովրդական բանահիւսութիւնից՝ Ա. Իսահակեանի.—Գողթն՝ Ե. Լալայեանի.—Զանգեզուրի գաւառ. Ղափան (Դաւիթ-բէկը ժողովրդական աւանդութիւնների մէջ).—Հայ ընտանեկան պաշտամունքը՝ Խ. Սամուէլեանի.—Շարուր-Դարալագեազի գաւառ՝ Ե. Լալայեանի.—Գրախօսութիւն՝ Իրաւաբանի.—Կ. Եղեանի յիսնամեակի մասին՝ Ի. Ցարութիւնեանի.—Արգար Յովհաննիսեան.—Ստ. Զելինսկի.—Ազգագրական-Հրատարակչական ընկերութիւն. Ծրագիր տնայնագործութեան՝ Կարա-Մուրզայի։
Բացված է XIII և XIV գրքերի բաժանորդագրութիւնը. բաժանորդագին է 3 բուբլի։ Դիմել՝ Ерванду Лалаянцъ, Тифлисъ, Саперная, 5. 1—2

ԳԱԲՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ
հեղինակութիւնները.
նոր տպագրութեամբ, ուղղած եւ լրացրած։
I ՊԷՊՕ
Կատակերգութիւն երեք արարուածով, երրորդ տպագրութիւն։
Գինն է 50 կ.
II ԽԱԹԱԲԱԼԱ
Կատակերգութիւն չորս արարուածով, երկրորդ տպագրութիւն։
Գինն է 50 կ.
Վաճառվում են Թիֆլիսում՝ Կենտրոնական, Կովկասեան և «Գուտտենբերգ» գրավաճառանոցներում, և Բագուում տիկին Մ. Սունդուկեանցի գրավաճառանոցում։ (չ.հ.չ.) 9—10

Թիֆլիսի քաղաքային դպրոցները—I Վէրայի չորսդասեանը, II երկաթուղային 6 դասեանը և III Նիկոլաեվսկին խնդրում են 4-դ բաժանման (դասարանի) սաների ծնողներին շնորհ բերել նրանց դպրոցները ներկայ մարտի 17-ին, 5-դ բաժանման (դասարանի) 18 ին և 6-դ բաժանմանը (դասարանի)—մարտի 19 ին կէսօրվայ ժամը 4 ին՝ խորհրդակցելու այն միջոցների մասին, որոնք անհրաժեշտ են յիշեալ դպրոցներում կանոնաւորապէս ուսումը շարունակելու համար։ 15, 16, 17 3—3

Կենտրօնական Գրավաճառանոցում վաճառվում են
հետևեալ նոր գրքերը՝
Մուրացան, Երկասիրութիւնների ա. հատորը. Նոյի ագռաւը, Առաքեալը, Խորհրդաւոր Միանձնուհի, գինը 1 ր. 50 կ.
Շիրվանզադէ, Նամուս ,գ. 1 ր.
» Ցաւագարը, գ. 50 կ.
» Քաոս, վէպ, գ. 1 ր. 50 կ.
» Երկերի ժողովածու, հատոր ա., բ., գ., իւրաքանչիւրը 1 ր. 50 կ.
Պատկանեան Ռ., Երկասիրութիւնների գ. հատոր, 1 ր. 50 կ.
Պալասանեան Ս., Պատմութիւն հայոց, 1 ր. 50 կ.
Թուշեան Պ., Հացի խնդիր, վէպ, 1 ր. 50 կ.
Սրուանձտեան Գ. Ե., Երկասիրութիւնների հատոր ա. Հատ. հոտով, հեղ. պատկերով, 1 ր. 25 կ.
Ս. Էջմիածին, 303—1903, պատկերազարդ նկարագրութիւն, 1 ր.
Տ. Եմ., Լուսադիմին, թարգ. Մ. Բարխուդարեանի, 1 ր.
Վերոյիշեալ գրքերից միանուագ տասը բուբլու գնողները Թիֆլիսում ստանում են 10% զեղչ, օտար քաղաքներից պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։
Դիմել՝ Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю. (ռ.) 7—10

ԿԻՐ
Ծախվում է ամենաընտիր Զեգվի ԿԻՐ
Գ. Ա. Սբորչիկեանցի եւ որդոց շոգեգործարանից
(Նախկին Խոզորսկու)
որ գտնվում է Անդրկովկասեան երկաթուղու Քանկա կայարանում։ Պահեստը Թիֆլիսում. Ելիսավետինսկայա և անկիւն Բակինսկայա փողոցների։
(հ. ռ. չ. չ. չ. չ.) 2—6

Ս. Պետերբուրգի մեքենայական արդիւնաւոր գործարանի ընկերութեան
ԱՄՈՒՐ, ՃԱՇԱԿՈՎ և ԹԵԹԵԻ, ԿԱՆԱՆՑ, ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ և ԵՐԵԽԱՆԵՐԻ
ԿՕՇԻԿՆԵՐ,
նոյնպէս և սկօրօխօդներ ու սանդալներ կարելի է ստանալ Թիֆլիսում և Անդրկովկասի միւս քաղաքներում ԱՄԵՆԱԼԱՒ վաճառատներում։

ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
С.ПЕТЕРБУРГЪ.
Խնդրվում է ուշք դարձնել ֆաբրիկայի նշանի վրա։

„ԼԷՕՊՕԼԴ ՆԷՅՇԵԼԷՐ“
Առևտրական տան պահեստում կայ ընտրութեան համար մեծ քանակութեամբ ռուսական եւ արտասահմանեան արդիւնաւոր գործարանի
ԿԱԶՈՒԵՂԷՆԻ ՍԳՐԱՆՔՆԵՐ
Տելեֆոն № 346. 81—44 Երևանեան հրապարակի վրա։

Дозволено цензурою. Тифлисъ, 17-го Марта 1905 г. Տպարան «ՀԵՐՄԻՍ» ԸՍԿ. Электропечатня типографскаго Т—ва „Гермесъ“. Мал. ул. №15